

Թէ մեր եկեղեցին ի Ռասադըլական կամ
Պրիֆորթան կոչելով՝ զոր երբեք չը կո-
չեցին ոչ ինքն բազմերախտ Հայրա-
պետը և ոչ իւր մեծաւաստակ յաւորդ-
ները :

• Հարկ չենք համարեր մեր դիտող-
ութիւնը երկարել այս մասին բազ-
մաթիւ վկայութեամբ նախնեաց, վա-
սն զի արարչով ենք, որ մեր նկատ-
մունքը ըստ ամենայնի իրաւացի պիտի
գտնեն այն ամեն ընթերցողները, օ-
րոնք փոքր ի շատէ գեգեբած են մեր
նախնեաց մատենագրական երկասի-
րութեանց և մեր եկեղեցական յի-
շատակարանաց մէջ : Աւստի և ապա
հով ենք, որ սպասենք ինամնով կը
յարգուի մեր եկեղեցւոյ նախնական
կոչումն Թէ՛ պաշտօնական և Թէ՛ ազ-
գային այլ և այլ գրուածոց մէջ, որ է
Մատենական Եկեղեցի Հայաստանաց, և
այսպիսով կը թարգմտի նորահար բա-
ռերու արաւաղութիւնը. որ եթէ նոյն
անգգուշութեամբ շարունակի, գա-
ցէ նորանոր բառեր ևս պիտի բազ-
մանան, և վերջը պիտի կարծուի օտա-
րաց առջև՝ Թէ մեր Եկեղեցին մի բա-
նի տեսակ բաժանումներ ունի :

ՃԵՄԵԼԵԿԵԳՐԵԿԵՆՔ

Աւարտութեամբ արտի կը ծանու-
ցանմբ Սրբոյ Օննդեան հոնդիսին
խաղաղութեամբ և քրիստոնէական
պարկեշտութեամբ կատարուիլը : Այս
համառօտակի ծանուցաւոր սա նպա-
տակաւ կ'ընենք, վասն զի գիտեմք. քաջ
որ մեր Սրբոյ, բաժանարդներէն որոնք
որ երկուս ասարի յառաջ այն հրաշա-
լի հանգիսին ներկայ գտնուած են՝
տեսած են մէկ քանի կրօնամոլ օտա-
րապետաց երեսէն նոյն երկրպագելի
տեղը քնն արեւոտի հակաբերականէս :

կանութեան ու գայթակղական գոր-
ծոց ասպարէզ կը դառնար : Այս ան-
շուշտ եռացեալ սրտիւ կը սպասեն Թէ
այս տարի քննչայէ կատարուեցաւ այն
Սրբազան արարողութիւնը : Սէկքա-
նի կրօնամոլներու երեսէ ըսինք. վասն
զի ապահով ենք և վստահ իսկ որ՝
Յունաց Պատուարժան Միաբանու-
թիւնն ինչպէս մեք նպասեօ չեն փո-
փաքի երկրպագելի տեղ մը մենա-
մարտութեանց և այն կեդրոն ըլլայ .
վասն զի այն Հայր և Յոյն տաճարէն
դուրս սիրով և խաղաղութեամբ կը
վարուին, քնն զարմանք սէր քարոզ-
ուած տեղը ատելութիւն յարուցա-
նին : Չրուիր օտարական տեղեաց ի-
րաւասութեան գրգիռն է . վասն զի
ամեն ազգ իւր բաժինն ունի, և ար-
դարագանս խառնվարութենէն բարձ-
րագոյն հրովարտակով վաւերացեալէ :
Այս ուրեմն՝ ինչպէս ըսինք մէկ քանի
Աւետարանին հրամայած սուրբ սիրոյ
և խաղաղութեան հակառակ վարուող
կրօնամոլ սինկրորներու անօգուտ
գրգիռն է, որ օր ըսա օրէ օնչանա-
լու վրայ է շնորհիւ և ազգու յորդոր-
մամբ Սրբական Պատրիարքաց : Այս
պարծանօք կ'ըսենք որ Հայր միշտ
խաղաղութեան հետեւած է, գոթադ-
դաբար Թնամութիւնը իմոսսինն-
րէն սկսած է :

— Յուպելու մեր Սրբոյ, նամակագիրը
տեսայ 18 Թուականով գրած նամա-
կաւը հետեւեալ բերկրութիւն լուրը կը
հաղորդէ հրատարակելու խնդրանօք :
Այնքալ տեսայ վերջին կիւրակէ օրը
տեղւոյն փորրիկ գարոցին ասկաւաթիւ-
աշակերտաց և աշակերտութեանց առա-
ջին ութամենայ քննութեան հանգի-
սին կատարուիլ ի ներկայութեան Սր-
բանուց տեսուչ Սրբոյ : Աթանաս վա-
րդապետի, և քաղաքայի ժողովրդոց :
Աշակերտք գոհացուցիլ պատառնան

տուած են հարցմանց որք են, քերական
նութեան ութն մասունք բանին և բը
րիստոնէական պատմութիւն : Արդա
րեւ մեծ պատիւ կը բերէ Ալլաբապի
Արթ. Տ. Վարդան վարդապետի, որոյ
ուսումնասէր ջանից արդիւնքն է . այն
պիսի տեղ մի ասկաւածիւ Հայ ման
կուոյն գիտութեան ճաշակն առնել
նին : Այրին Արժանապատուութիւնը
իւր ժամադրութեան ծանր պաշտո
նէն ժամանակ գողնալով՝ աշխատե
ր բարոյական սպասն ալ մատուցանել
տղայոց, որոնք աւելի պէտա ունին ի
սկզբան մանկական հասակնուն մէջ
գիտութեան լուսով իրենց մտքերնին
մշակելու, որոյ շնորհիւր ապագային ը
լան կոնասէր ու հայրենասէր Հայեր :

Ասումնասէր հայրը համայն Սի
աբանութեան շնորհակալութիւն ընդու
նած է, ինչպէս և բոլոր ժողովրդոց .
որուն գովութեամբ կը վկայէ նամակա
գիրը, և միանգամայն կը խնդրէ քա
ղաքացւոց կողմանէ Ամեն . Սրբազան
Պատրիարք Հօրմէն պէթ ժամանակ մի
եւս Արթ. Վարդան վարդապետը չի
հեռացնէ այն պաշտօնէն, մինչեւ աշա
կերտք քերականութիւնը ամբողջ ա
ւարտեն : Այ պակաս գովութեամբ ու
շնորհակալութեամբ կը յիշէ տեղւոյն
Արթ. Տեղւոյն սուրբ հօր ազգասիրա
բար մատուցած գիւրութիւնները ի
յառաջագիմութիւն աշակերտաց : Աշ
արդարեւ արժանի է շնորհակալութե
վասն զի Պօղոսի խնկածը առանց Ա
սորոսի ջրոյն չի զարգանար :

Ի վերջոյ նամակագիրը ցաւօք սրտի
կը յայտնէ ժողովրդոց սմանց ուսման
գեւմ ունեցած հակակրօթիւննին :

Այս մասին ի միւրթարութիւն մեր
բարեկամին սա կ'ըսեմք, ինչպէս ինքն
ալ իւր գրութեամբ մեր խօսքը կ'ա
պացուցանէ :

Աւսման ճաշակը չառնող խնձ մի

Բնէ կը դգայ ուսմունքէն . այո՛ , խեղճը
կը կարծէ որ դեռ հացագործը ու նշ
արարավաճառը ուսմունք չեն տոներ ,
այլ երբ համագուի թէ ուսման շնորհիւ
իւր արդի ամենագիտար աշխատու
թեամբ մշակած պարտեզը շատ գիւ
րին կերպիւ կը մշակուի , պիտի հա
մագուի որ ուսմունքը թէ և բոլորովին
չեն գոհացներ հացագործը և այն , այլ
բաւական կը գիւրացնեն հաց ճարե
լու կերպը :

Ի վերջոյ այս եւս կը յաւելցնեմք
թէ դժբախտ գիտութեան ճակատա
գիրն է ժամանակ մի եւս հալածուիլ
ու նախատուիլ ուսման ճաշակը չառ
նող հայերէն . պէտք չէ յաւսահատիլ .
քաջ զինուորը իւր ճակատը թշնամոյն
արեան շիթերով կը պսակէ . ապահով
ճանապարհէն երթալը քաջութիւն չէ՝
ժամանակակից իմաստնոյ մի ըսածին
նման :

Այնպէս Դամոսկոսի նամակագիր
նիս գովութեամբ կը գրէ նոյն տեղի
դպրոցին վրայ , և կը խնդրէ իրենց
շնորհակալութիւննին Սիօնի միջոցաւ
նուիրել տեղւոյն բարեջան Արաշնորդ
Արթ. Տ. Բառնաբաս վարդապետին
և տարեկան ժամադրար Արթ. Տ. Սեւ
րովը վարդապետին , որ առաջնոյն իւր
րախտասանօքը և երկրորդին աշխատա
սիրութեամբը օր ըստ օրէ կը յառա
ջանան աշակերտք գիտութեան մէջ .
Այիլի է մեզ հանդիսիս միջոցաւ այս
պիսի բերկրաւթ լուրերով Ա եծ ,
բաժանորդաց տիրեալ սրտերը ուրա
խացնել : Տիրեալ , վասն զի երբ ու
մեն հայ նուրբ գիտողութեամբ կը
ռելու ըլլայ . ազգիս արդի վիճակը , ար
դարեւ ցաւօք կ'ըսեմք , ուրախութեան
նշող մի չի պիտի տեսնայ , Դժբաղդ
Հայուն ճակատագիրն է ամեն տեղ
տգիտութիւն , եղբայրատեցութիւն ,
(սորհեմութիւնը կը հարկադրէ այս

տեղ կէտերով : . . անցնիլ տեսնել :
 Լճիս բարորութեան և երջանկու-
 թեան դարերուն պատմութիւնը կար-
 դացող Հայուն սիրտը կուրախանայ :
 Լճս, ամեն տեղ շատ քիչ յառաջա-
 դիմութեան լոյսը ծաւալելու սկսած
 է : Բայց նոյն լոյսին նայելու սուր
 աչք չունենալնուս, քիչ միջոցէն աչ-
 քերնիս կը խողովի (քամաջմար) և
 տեսական զօրութիւննիս կը նուազի,
 որով յուսաբեկ յետս կը դառնամք :

Լպացոյց, ահա հետեւեալ հատ-
 ուածը որ Բերիայի մեր Սեծ. նամա-
 կագրին գրութեան համառօտութիւ-
 նըն է, զոր ընդունած ենք հրատա-
 րակելու խնդրանք, որն որ թէպէտ
 ուշ հասաւ ձեռքերնիս, սակայն կու-
 րենորութիւնը ծանօնալով կը փու-
 թանք համառօտ պարունակութիւնը
 հրատարակելի տեղեկութիւն ազգայ-
 նոց :

1866, օգոստոս 25 էն Բերիա գրու-
 նառող Արարկերցի ազգայինք իրենց
 քաղաքի սեթ վարժարանաց պիտոքն
 հոգալու համար ընկերութիւն մի հաս-
 տատած են, որն որ Կլիկիա լրագրոյն
 միջոցաւ ծանուցուած էր, և որն որ տա-
 կաւին կը շարունակուի եղեր յեծապա-
 տիւ անդամոց գործունէութեամբ :
 Լճս ընկերութիւնը այլ և այլ քաղա-
 քաց մէջ ճուղեր ալ ունի, ինչպէս
 Պօլիս, Կարին, Երեստիա, Յանդէպ,
 Իրզնկա : Հիմա մէկ տարուան և չորս
 ամսուան արդիւնք ըլլալով 70-80 () ու
 մանեան լրիւ պատրաստի ունի եղեր,
 և կ'ուզեն անխափան շարունակել ի-
 րենց բարի և ազգօգուտ նպատակը :
 Նաեւ պատրաստ են պահանջուած ժա-
 մանակ հաշիւ տալ՝ հեռաւոր քաղա-
 քաց մէջ գտնուող ընկերութեան ան-
 գամոց միամտութեան համար, բայց
 սակայն կը ցաւին որ Պօլիս գտնուող
 քաղաքացի ազգայինք ջրուած և խան-

գարուած կ'երեւին :

Լճս համառօտ տեղեկութիւնը
 հրատարակելէն վերջ մենք ևս կը խնդ-
 րեմք մեր Լրարկերցի յարգի ազգային
 ներէն, որ չի լքանին այսպիսի բարե-
 նոյառակ գործէ մի . քանի որ սկսած է
 քիչ շատ հաստատած են լռել է գրծ-
 ուարութեանց մէկ մասին յաղթած
 են, ապագային մէջ պատահելիք դրծ-
 ուարութեանց ալ յարատեւութեամբ
 կրնան յաղթել . նպատակնին խիստ
 գովելի և շատ օգտակար է, այսինքն
 ապահովել վարժատանց յարատեւու-
 թիւնը . որ եթէ յաջողին ապագայ սե-
 րունդը իրենց երախտապարտ պիտի
 կացուցանեն, ուստի եթէ օայդ է որ
 ոմանք ջրուած և խանգարուած են,
 կը յորդորենք որ միանան և անընդհատ
 շարունակեն, իսկ եթէ բանաւոր պատ-
 ճառ մի ունին, կրնան տեղեկագրով
 մը իրենց ընկերութեան կեդրոնատե-
 ղին իմացունել և բացատրութի պա-
 հանջել : Լրարկերցի ազգայնոց աշխոյ-
 ժին և հաստատամտութեան վերայ
 վստահ ըլլալով, առ այժմ այսչափ կ'ը-
 սենք և կըստատենք որիչ անգամ ա-
 ւելի օրինաւոր տեղեկութի ծաւալով
 այս նիւթիս վերայ ընդարձակ խօսիլ :

— Լնոցա 12ին երեկոյեան ժամ տա-
 ւրնուկէսին 3-4 մանրեքորդի չափ բա-
 ւական ցնցմամբ շարժ եղաւ Ս. քա-
 ղաքս : Շարժումը հիւսիսէն դեպի
 հարաւ էր, գահութիւն Լսաւծոյ
 որ չի կրկնեց, վասն զի Ս. Կաղաթիս
 համար մեծ վնասներ կ'առթէր եթէ
 շարունակէր . ընդհանրապէս չէնքերը
 քարաշէն ըլլալուն այսպիսի գէպքե-
 լէն մեծ երկիւղ կը կրէ : Կիւղացւոց
 (Նիքիւհնեթուն) շատ մեծ մասը չը գի-
 տեն երկրաշարժի ինչ ըլլայ և յա-
 նակնկալս այսպիսի իրենց համար նոց
 պատահման վրայ ըրած առաւապելնին
 ոչ միայն վարմանալի է գիւտերնուն

նկատմամբ, այլ և ծիծաղելի և Ահան-
ջալուր եղած եմք մէկ քանի ծիծաղա-
շարժ պատմութեանցը և եթէ առիթ
ունենամք յառաջիկայ թերթերով
հետաքննելու և հրատարակելու
ի գտարածութիւն ընթերցողոց,
և զայն իրենց ճարտիկութեան կու-
տամք, անուրանալի է Ալեքանդրոս ա-
ջալքութիւնը մանաւանդ ի գական
սեռին՝ բաղդատմամբ իրենց ունեցած
անուսուամբ վիճակին:

— Բնոյն 21 ին հասաւ ի Ս. Բաղդա-
ստիւնի կամ նոր լըմանիոյ Սեփար-
տէրութեան նորնախի շիւղատոս
Սեփ. Տղթոր Պ. Պէտրմանը՝ որ ար-
դէն յայտնի է ուսումնական աշխար-
հին որպէս նշանաւոր Արեւելեան լե-
զոնները գիտցող, և Հայոց ազգին
որպէս մեծահմուտ հայագէտ:

Այս նշանաւոր անձը Ս. Բաղդա-
ստիւնի շիւղատոսական պաշտօնին
հետ ունի և բանասիրական ու հնա-
սիրական հետազոտութեանց պաշտո-
նին ալ: Սեփ. Պ. Պէտրմանի որժա-
նաւորութեանցը համեմատ սիրալի-
րնդունելութիւն եղաւ կառավարու-
թեան և հիւպատոսաց և երեք վա-
նագ կողմանէ ք. որոյ ի պատիւ, ընդ
յառաջ խրկուած էին հիւպատոսարա-
նաց և վանաց թարգմանները Աստի-
ճիւնի, և հետզհետեւ պաշտօնական
պայելութիւններն ալ կ'ըլլան: Պ. Պէ-
տրման հաղորդեց մեզ յօդուած մի
Արեւի միջոցաւ հրատարակելու, զոր
խրկած է Պէտրման Պ. Այնսա տէր
Արեւիչեանց վերին Արեւիչի ուսու-
մնադարդ պատանին, որ թիւթիկի բա-
րեհամբաւ ուսումնարանին մէջ Հայ
կական ուսումները զարարեցնելու
այժմ վերոյ յիշեալ քաղաքը կ'աշխատի
եւրոպական լեզուաց աւագութեան
կատարեալ ուսմանը առնելու: Այս
անգամ Արեւի մէջ տեղ չունենալ

նուս կը պարտաւորիք գալիք ամսոյն
հրատարակել:

— 22 ին Արեւիչի անուանեալ խոր
ջրհորը յորդեց, որ ըստ քաղաքաց-
եաց և գիւղացւոց յառաջիկայ տար-
ւոյն առատ պտղաբերութեան նշան
է. թէ և գոհութիւն Աստուծոյ անձ-
րեաց յաճախութիւնը արդէն կ'են-
թադրեն արմուեաց և հայր առա-
տութիւն ըլլալը սոյն տարւոյն մէջ:

Անցեալ ամսոյ վերջերը Ս. Բա-
ղդաստի (Հունաց Պատուարժան Ս) ի
արեւմտութիւնը իւր գլխաւոր ան-
գամներէն մինը կորցաւ:

Առաստաղութեան հանգէսը կա-
տարող և վանուց առաջին փոխա-
նորդ Արիստութիւն (Ս) ուր Պետ-
րոս) ութսունամեայ ծերութենէն էր՝
որ կնքեց իւր մահկանացուն վաթ-
սուն տարուան չափ ծառայելով ի-
րենց վանուցը:

Հանգուցեալ ծերունին իւր խա-
հեմ բնաւորութեամբն և առա-
տաճեալութեամբը Ս. Բաղդաստի
բոլոր բնակչաց սիրելի էր, և իւր
պաշտօնին նկատմամբ զարմանալի
էր Սուրբ ցուցցած յարգանքը
ու նուիրատուութիւնը: Այս իւր
հաւատարիմ ծառայութեանցը փա-
խարէն վարձատրուած էր Սուրբ
կայսրութենէն շքանշանով:

Թաղման հանգէսը շատ փառա-
ւոր եղաւ. բոլոր շիւղատոսք ի-
րենց համագլխատովը ներկայ էին
յուզարկաւորութեան, և ի պա-
տիւն՝ նոյն օրը իրենց դռները կէս
պարզած էին: Ս. Վանուցս կող-
մանէ խրկուեցան երկու վարդա-
պետք և Աստիճի հանգիստադիր
գոմարեալ:

(1) Յոյն Զատիի քաղաքացի լուսաւորեալի
հանգէսը կատարուին Սուրբ, պատուանշանը կու-
տան: